Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գրաբարի բառակազմությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1987, 374 էջ

Բառակազմությունը, իբրև լեզվի համակարգի ինքնուրույն գիտաճյուղ, առանձին ուսումնասիրության առարկա է դարձել վերջին տասնամյակներում։ Սակայն կոնկրետ որևէ լեզվի պատմական զարգացման որոշակի ժամանակահատվածի բառակազմական համակարգ համաժամանակյա մոտեցմամբ հետազոտության ամբողջական առարկա չի դարձել ինչպես սովետական, այնպես էլ, որքան մեզ հայտնի է, արտասահմանյան լեզվաբանության մեջ։ Այս առումով գրախոսվող աշխատությունը միանգամայն հրատապ է թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով ոչ միայն հայագիտության, այլև ընդհանրապես բառակազմության տեսության հայեցակետից։

Ուսումնասիրության նյութը V դարից մեզ ավանդված մատենագրության բառապաշարն է՝ քաղված «Նոր հայկազյան բառարանից» համատարած ընտրանքի մեթոդով (ընդգրկված են 43 աղբյուր)։ Այն համալրված է հայկական համաբարբառի տվյալներով։ Թվային արժեքներով ուսումնասիրվող միավորները 23000-ն են (բարդ և ածանցավոր), որոնք, ըստ հեղինակի, թեև լիակատար չեն արտացոլում V դ. գործածված բառապաշարի ողջ հարստությունը, սակայն միանգամայն բավարար են հին գրական հայերենի սկզբնավորման ու զարգացման առաջին շրջանի բառակազմական համակարգի առանձնահատկությունների մասին պատկերացում կազմելու համար։ Նյութը քննվում է համաժամանակյա բառակազմության հայեցակետից։ Սակայն հեղինակը չի անտեսել այդ մեթոդի այն թերի կողմը, ըստ որի նախորդ կտրվածքից փոխանցված տարրերի բացասումը հանգեցնում է ուսումնասիրության ոչ լիակատարության։ Ուստի, անհրաժեշտության դեպքում, նա դիմում է այդ տարրերին ևս, հետևելով համաժամանակյա և տարժամանակյա մեթոդների համադրման արդիական ըմբռնմանը։ Նպատակն է բացահայտել V դ. գործուն և կենդանի բառակազմական համակարգը իր բոլոր տարրերով և կաղապարներով։ Նկարագրությունն ավելի են արժեքավորում քանակական հաշվումները, որոնք ճշտում են յուրաքանչյուր կաղապարի և ենթակաղապարի գործառույթի ծանրաբեռնվածությունը, ենթակաղապարի ու կաղապարի՝ փոխհարաբերությունը։

Մինչև բառակազմական եղանակների (բառաբարդում և ածանցում) նկարագրմանն անցնելը, հեղինակը կանգ է առնում ելակետային որոշ հասկացությունների պարզաբանման վրա։ Բառերի տրոհման և տրոհելիության տարբեր աստիճանների հարցը քննելիս (տեղին է նշել, որ տրոհելիության աստիճանների դասակարգումը առաջին անգամ է արվում) նա տրոհելի է համարում այն կազմությունները, որոնց բաղադրիչներից առնվազն մեկը ուսումնասիրվող փուլում պահպանել է իմաստային և գործառական իր որոշակիությունը և հարաբերակցվում է նաև այլ բառերում հանդիպող նույն կամ նույնարժեք տարրերին։ Նա հետազոտության ընթացքում շեշտը դնում է բառակազմության գործառական կողմի վրա՝ առանձնակի չանդրադառնալով իմաստաբանությանը, սակայն այն դեպքերում, երբ բառի իմաստը նպաստում է բառակազմական կաղապարի ձևավորմանը, հաշվի է առնվում և իմաստաբանությունը։ Բառակազմական հիմքի հասկացությունը, ինչպես նաև բառակազմական երկրորդական ձևույթների սահմանումները հիմնավորվում են ձևաբանական նույնարժեք միավորների հետ դրանց ընդհանրությունների ու տարբերությունների կապի մեջ։ **Հիմնական, ելակետային ձևույթ՝ առաջնային հիմք** *է համարվում բուն բառակազմական այլ ձևույթներ չպարունակող և բառակազմորեն այլևս չտրոհվող միավորը։* **Բառակազմական երկրորդական ձևույթների ցանկում** *բերվում են ածանցները և քերականական արժեք ունեցող բառակազմական ձևույթները։ Վերջիններիս տարբերությունը բուն քերականականներից այն է, որ հանդիպելով ոչ եզրային դիրքում, կարող են ստանալ նոր ածանցներ* **(գերագոյնութիւն, սիրելապար)**։ *Բառակազմական հիմքը ձևավորող տարրերից բերվում են* **թեքույթներն ու կազմիչները**, *այլև գրաբարին բնորոշ գործառական բնույթի այնպիսի մասնիկներ, ինչպիսիք են* **հոդակապերը (ննջետատան, կարօգին, երկոտասան, տանուտէր)** *և հոդակապի դերով հանդես եկող* **շաղկապներն ու նախդիրները (աղուհաց, այրուձի, երբեմն, բարձրիգլուխ, այդիչափ)**։ *Այս մասնիկներով բառանյութի ուսումնասիրությունը հեղինակին բերում է այն եզրակացության, որ V դ. լեզվավիճակում հոդակապը, ինչպես և այդ դերով հանդես եկող շաղկապներն ու նախդիրները զուտ գործառական մասնիկներ են և չունեն*

իմաստային բեռնվածություն, ուստի գրաբարի բառակազմական բերված տարրերի զուգորգումների ողջ բազմազանությունը հանգեցնում է հետևյալ երկու կաղապարներին՝ հիմք+հիմք և հիմք+ածանց (էջ 56)*։

Ամենայն մանրամասնությամբ («Հիմքակազմություն» բաժնում) ներկայացվում են բառակազմական հիմքերը։ Առանձնացվել են առաջնային և երկրորդային հիմքեր, որոնցից յուրաքանչյուրը կարող է լինել ինչպես մաքուր, այնպես էլ ձևավոր։ Առաջնային մաքուր հիմքերը համընկնում են արմատական ձևույթին և բառակազմության ընթացքում որևէ փոփոխություն չեն կրում (բացի շեշտի կորստից), իսկ երկրորդային մաքուր հիմքերը այդպիսին են համարվում, եթե բառակազմական նոր ձևույթի հավելմամբ փոփոխություններ չեն կրում։ Ձևավոր հիմքերը ստորաբաժանված են երկու տիպի՝ ըստ հնչյունական փոփոխությունների և հիմքակազմ տարրերով ու հերթագայություններով օժտված լինելու փաստի։ Բերվում են հնչյունափոխության բոլոր դեպքերը՝ փաստարկված բազմաթիվ կամ սակավ (ըստ տարածվածության) օրինակներով։ Բավական է նշել, որ ավելի բարդ պատկեր ներկայացնող բայահիմքերի ձևավորման 10 կաղապար է առանձնացվում, որ հաշվի առնելով դրանց միջև եղած համակարգային կապերը, ներկայացվում է նաև հետևյալ կերպ. 1. ներկայի հիմք— ա) արմատական, բ) սոսկածանցավոր, գ) պատճառական ածանցներով, դ) եզակի երրորդ դեմք, ե) եզակի առաջին դեմք, 2. կատարյալի հիմք— ա) արմատական, բ) ցոյական, դ) պատճառական ածանցներով, դ) հրամայականի եզակի երկրորդ դեմք (էջ 81—82)։

Գրաբարի բառակազմության բնորոշ առանձնահատկությունն է հիմքերի տարբերակայնությունը կամ հիմքակազմական զուգաձևությունների առկայությունը (4 տիպ՝ բազմաթիվ ենթատիպերով), որն իր հետ բերում է նաև հարացուցային տարբերություններ։ Աշխատության առանցքային մասը բառակազմական կաղապարների նկարագրությունն է։ Այսպես՝ բառաբարդումը ներկայացված է երկու հիմնական խմբերով. հոդակապավոր և անհոդակապ՝ իրենց ենթախմբերով ու ենթակաղապարներով. որոնք բերվում են ըստ կաղապարների աստիճանական բարդման։ Դա հնարավորություն է տալիս տեսնել բառակազմական ավելի խոշոր միավորը՝ շղթան և փաստորեն ընդլայնել բառակազմական կաղապար հասկացությունը։ Գրաբարի հոդակապավոր բարդությունների թվում հեղինակը վկայում է (ըստ իր ընտրանքի) 32 եռաբաղադրիչ (նաև ածանցավոր) և ընդամենը 1 քառարմատ բարդություն՝ քափանցանցալոյս:

Ուշագրավ է այն, որ հեղինակը չի բացառում (նախածանցավոր բարդությունների դեպքում) բառի երկպատճառաբանվածության առկայությունը, սակայն կարծում է, որ եթե երկու կաղապարներն էլ հնարավոր են, պետք է դիմել բառի բառակազմական իմաստին՝ ըստ բնագրային օրինակների։ Այսպես՝

անաստուածասէր ↙ աստուածասէր ↖ անաստուած,

բայց քանի որ վկայված է միայն «ոչ աստվածասեր» բառակազմական իմաստը (և ոչ թե «անաստվածներին սիրող»), հետևաբար, ըստ հեղինակի, բառը պատկանում է ածանցական կաղապարներին՝ a(sjs) (էջ 98)։

Բառաբարդման հիմնակաղապարների քննությունը եզրափակում են անհոդակապ կազմությունները՝ բազմազան ենթակաղապարներով։ Նկարագրությունն ամբողջացնում են նույն արմատի կրկնությամբ կազմված բարդությունները, սկսած ss-ից (այլայլ, պէսպէս) և s—s-ից (այր այր, անդամ անդամ), մինչև (sjs)sf (մեծամեծաբար) և (sa)(sjsf)—յատկանձնակայ։

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ածանցման նկարագրությունը։ Պարզվում է, որ ածանցման, այդ թվում նախածանցման ճանապարհով են ստեղծվել V դ. գրաբարի բաղադրյալ բառերի ավելի քան երկու երրորդը։ Բերվում է ածանցավոր բառերի կառուցվածքային լիակաղապարը՝ $a_3a_2a_1(j)sa_1a_2\bar{a}_3\bar{a}_4$։ Այս լիակաղապարի իրացումը, բնականաբար, չի բերվում, սակայն վկայվում է մեկ օրինակ՝ 3 նախածանցով— անճեռսաոռադրական (էջ 159)։ Բաղադրյալ բառում ածանցների ընդհանուր գումարը չորսից չի անցնում։ Բաշխումները հետևյալներն են՝ ներ+գործ+ող+ական+աբար, առ+ընդ+ուն+ող+ութիւն, մշտ+(ու)ենջ+ +ե(ա)ն+աւոր+ական, պահ+պան+ող+ական+ութիւն, առաջ+(ի)ն+որդ+ական+ +ութիւն և այլն։ Առավել տարածված և գրաբարի համար բնորոշ են as և sa, (sa)a կազմությունները։

Նկատելի տեղաշարժեր են տեղի ունեցել նախդիրներից առաջացած նախածանցների խմբում, ժխտականները, ընդհակառակը, փոխանցվել կամ պահպանվել են ամբողջությամբ։ Մաս-

*Հեղինակը աշխատանքում օգտվում է հետևյալ պայմանական նշանակումներից՝ s—սկզբնահիմք, a—ածանց, f—քերականական մասնիկ կամ թեքույթ, j—հոդակապ։

նակի փոփոխություններ է կրել հունարենի հետևողությամբ անկախ բառերից կամ բառահոդվածներից արհեստականորեն ստեղծված նախածանցների կազմը։ Նախածանցավոր կազմությունների կաղապարները ներկայացվում են ըստ ընդունված սկզբունքի՝ աստիճանական բարդացման ճանապարհով և վերջածանցների հետ զուգորդելիությամբ։

Առավել բազմազան են գրաբարի վերջածանցման կաղապարները, որ արդյունք են վերջածանցների զուգորդելիության։ Ներկայացնելով վերջածանցման կաղապարները համապատասխան օրինակներով, մեր տերմինաբանությամբ՝ պարզ ածանցավորներից մինչև բարդ ածանցավորներ, նշվում է, որ կաղապարի կառուցվածքի բարդացման համապատասխան նվազում է նրա կոնկրետ իրացումների հնարավորությունը։ Փաստ, որ դիտվում է նաև արդի հայերենի բառակազմական համակարգում։

Ուշագրավ է խառը տիպի կաղապարների նկարագրությունը։ Այդ կառույցները, որ առաջանում են բաղադրիչների միաժամանակյա կցումով բառակազմական մեկ քայլի ընթացքում, դեռևս համակարգային ուսումնասիրության չեն ենթարկվել մեր լեզվի զարգացման որևէ փուլի բառակազմությունը նկարագրող աշխատություններում։ Խառը տիպի կաղապարները ևս կառուցվածքային տեսակետից զգալի բազմազանություն են ներկայացնում (մի բան, որ արդի հայերենի համար չի կարելի ասել), սակայն կոնկրետ իրացումները վկայված են մեկ-երկու օրինակներով (ընդհանուր թիվն է 382)։

Յուրահատուկ տեղ է գրավում բայակազմությունը։ Հեղինակը իրավացիորեն նշում է, որ բուն բայական արմատների ճանաչման միջոցը գոյականակերտ ածանցն է (վազf, տուrf, բւrf, խօսf և այլն), իսկ այն դեպքերում, երբ բայական արմատը ձևով համընկնում է անկախ գործածություն ունեցող գոյականական արմատին (սէր-սիրեմ, գէտ-դիտեմ), դժվարություններ են առաջանում բայերի բառահիմքերի կարգային պատկանելության որոշման հարցում։ Այս պարագայում, եթե գոյականն ունի առարկայացված գործողության (ծին, կիր) կամ գործող անձի իմաստ (եկ, դէտ, գէտ), հնարավոր է ենթադրել արմատի բուն բայական ծագումը, և այս դեպքում գոյություն ունի այսպես կոչված՝ «ետադարձ բառակազմություն», երբ պարզ ձևը իմաստային տեսակետից ածանցյալ է, իսկ եթե գոյականի մեջ դժվար է ընկալել գործողության իմաստ (սէր), ապա արմատը ծագումնաբանորեն կարող է լինել ինչպես բուն անվանական, այնպես էլ բայական՝ գոյականների մեջ գործողության իմաստի հետագա թուլացումով» (էջ 299—300)։ Այս կարևոր տեսական եզրահանգումը ունի գործնական մեծ նշանակություն։ Փաստորեն հեղինակը հանգում է այն համոզման, որ բայական արմատ ունեցող բայերը ժառանգվել են հնագույն շրջանից և ուսումնասիրվող ժամանակաշրջանի համար «մեռած» կաղապարների արժեք ունեն, իսկ այլ խոսքի մասերից կերտված բայերի կազմությունը ենթարկվում է բայական բառակազմության գործող կանոններին։ Մշակելով որոշակի սկզբունքներ և չափանիշներ, հեղինակը ներկայացնում է բայակազմական կաղապարները՝ դարձյալ պարզից (sa (բերեմ, գրամ)), բարդ ({ā[sj(sa)]}(a + a) — շմարդաճաճոյաճամ)։ Կաղապարների գործառական բեռնվածությունը բացարձակ և տոկոսային հարաբերությամբ տրված է ծավալուն աղյուսակով։ Բայական բոլոր կաղապարների թիվը 3078 է։ Ծավալուն աղյուսակներով են ամփոփվում նաև բառաբարդումն ու նախածանցում—վերջածանցումը։

Ուսումնասիրության վերջում ներկայացվում են ածանցների գործառական առանձնահատկությունները։

Համոզված ենք, որ սույն մենագրությունը, նաև ուսումնասիրման իր ժամանակակից մեթոդներով, լայն կիրառում կգտնի արդի հայերենի բառակազմության հետազոտության բնագավառում։ Այդ պատճառով անհրաժեշտ ենք համարում հայտնել մեր որոշ նկատառումները.

1. բառակազմական կաղապարների ներկայացման փակագծային մեթոդը, որից օգտվում է հեղինակը, ունի որոշակի թերություններ (նշված է բառակազմությանը նվիրված գրականության մեջ). ա) այդ մեթոդով հնարավոր չէ ներկայացնել ածանցի անկման երևույթը (ճաշել→ճաշ) և հենց հեղինակի նշած «ետադարձ բառակազմության» ընթացքը (էջ 300), բ) հնարավոր չէ ցույց տալ բառակազմական ձևույթի փոխարինումը՝ $a_1s \rightarrow a_2s$։

2. Ըստ հեղինակի, բաղադրյալ բառերը գործածվում են իբրև պատրաստի միավորներ։ Այս տեսակետը թերևս չի խանգարում վերլուծության և նկարագրման ճշգրտությանը, սակայն թերի է տեսական առումով. չէ՞ որ բաղադրյալ, հիմնականում ածանցավոր բառերը նաև կապակցված տեքստի ստեղծման, որոշ փոխակերպումների միջոց են և հանդես են գալիս ոչ միայն նոր առարկա կամ երևույթ անվանելիս, այլև զուտ տեքստային հանգամանքներից ելնելով (նույն բառը չկրկնելու համար, տեքստը համառոտելու և այլն)։ Ուստի ածանցյալ բառերը պետք է դիտել իբրև երկգործառույթ՝ անվանական և տեքստային։

3. Մեր կարծիքով նպատակահարմար չէ խոսքիմասային անցումները ներկայացնել փոխակերպական կազմավարներ տերմինով, որը ընդունված է գործածել այլ իմաստով (օր. փոխակերպական քերականություն)։

4. Գրքում անտեսված է Մ. Դոկուչիի ձևաիմաստային դասակարգումը՝ տրանսպոզիցիա, մոդիֆիկացիա, մուտացիա, որը կնպաստեր նյութի ավելի հստակ ներկայացմանը (խոսքը միայն 12Ա, 12Բ, 12Գ աղյուսակներին է վերաբերում. էջ 351—356)։

Լ. Ս. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» մենագրությունը, անկասկած, ներգրում է հայերենագիտության, այլև բառակազմության տեսության մեջ։

Օ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ս. Կ. ՏԻՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածուներ